Ֆուրֆիլի հատուկ կրթության ծրագիր
223 N. Jackson Street
Glendale, CA 91206
Հեռախոս (818) 241-3111 x 509 ❖ Ֆաքս (818) 246-3537

Մնողական իրավունքներ և գործընթացի երաշխիք

(Խնդրվում է այս փաստաթուղթը պահել ձեր տեղեկության համար)

Հարգելի ծնող/խնամակալ/աշակերտ,

Այս տեղեկությունը ձեզ է տրամադրվում, որովհետև ձեր երեխան հավանաբար ցկատի է առնվում հատուկ կրթության ծրագրի ծառայություններից օգտվելու համար կամ վերջերս արձանագրվել է այդ ծրագրում: Այս տեղեկությունը տրամադրվում է նաև 18 տարեկան աշակերտներին: Դուք հատուկ կրթության ծառայությանը դիմելու իրավունք ունեք, եթե ձեր երեխան հանձնարարվել է հատուկ կրթության ծրագրի համար և ընդհանուր կրթության ծրագրի բոլոր հնարավորությունները ցկատի են առնվել, քննարկվել և հարմարության դեպքում կիրառվել:

Կալիֆորնիայում, հատուկ կրթության ծառայություններ են տրամադրվում ծորածնից մինչև 21 տարեկան անկարողունակ երեխաներին: Դաշնակցային և նահանգային օրենքները պաշտպանում են ձեր և ձեր երեխայի իրավունքները՝ հատուկ կրթության ծրագրում տեղավորելու և ծառայությունների համար գնահատման և ճանաչման ամբողջ ընթացքում: Անկարողունակ երեխաների ծնողներն անհատականացված ծրագրի պրոցեսին մասնակցելու և անվճար համապատասխան հանրային կրթության և հնարավոր այլ ծրագրերի, ներառյալ հանրային և ոչ հանրային ծրագրերի մասին տեղեկություններ ստանալու իրավունք ունեն:

Դուք այս տեղեկությունները ձեր մայրենի լեզվով կամ հաղորդակցության այլ ձևերով (խուլ ու համրերի լեզվով) ստանալու իրավունք ունեք, բացառությամբ եթե դա հնարավոր չէ: Այս իրավունքները կարելի է բանավոր թարգմանել ձեզ համար, եթե ձեր լեզուն գրավոր խոսք չունի: Տեղեկության այս գրքույկը տարին միայն մեկ անգամ կտրվի ձեզ կամ (1) ձեր խնդրանքով, (2) ձեր երեխային առաջին անգամ հատուկ կրթության գնահատման հանձնարարելու ժամանակ, (3) ձեր երեխայի վերագնահատման ժամանակ, (4) ձեր երեխային, դպրոցական վարքի կանոնների խախտման պատճառով տեղափոխելու դեպքում, (5) նահանգային բողոք ներկայացնելու դեպքում, և (6) դատական գործ հարուցելու պահանջագիրը ստանալու դեպքում: Հնարավորության դեպքում, գործընթացի երաշխիքը կարելի է նաև ձեռք բերել կրթաշրջանի կայքէջով և իմեյլի միջոցով: Այս հնարավորության մատչելիությունը պարզելու համար, խնդրվում է կապվել ձեր շրջանային կրթաշրջանի հետ:

Իրավունքները հասկանալու համար օգտակար կլինեն հետևյալ մեկնաբանությունները: Այս ուղեցույցի բովանդակության կամ օգտագործման վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար դուք կարող եք կապվել ձեր շրջանի կրթաշրջանի հատուկ կրթության ծրագրի վարիչի հետ, որի հեռախոսահամարը նշված է այս փաստաթղթի վերջին էջում:

Մեկնաբանություններ

Անկարողունակ երեխաներ՝ Ըստ «Անկարողունակ անհատների կրթության ակտի» (IDEA) «Անկարողունակ երեխաներ» տերմինը իր մեջ ներառում է մտավոր հետամնացություն, լսելու դժվարություն, ներառյալ խլություն, խոսքի և լեզվի դժվարություն, տեսանելու դժվարություն, ներառյալ կուրություն, հոգեկան հիվանդություն, օրտոպեդիկ դժվարություններ, աութիզմ, ուղեղի վնասվածք, առողջական այլ դժվարություններ կամ սովորելու որոշակի դժվարություններ, որոնց պատճառով անհատը հատուկ կրթության և հարակից ծառայությունների կարիք ունի։

Համաձայնություն՝ Համաձայնություն նշանակում է՝ (1) որևէ գործողության մասին տեղեկությունները ծնողի մայրենի լեզվով կամ հաղորդակցության այլ ձևերով հայտնելուց հետո պահանջվում է ծնողի համաձայնությունը, (2) ծնողները հասկանում և գրավոր կերպով համաձայնում են այդ գործողության հետ, և այդ ստորագրված համաձայնագիրը պարունակում է գործողությունների նկարագրությունը և հաղորդվող տեղեկությունների ցանկը և թե ում է հաղորդվելու՝ աշխատանքները նախաձեռնելու և իրագործելու համար, և (3) ծնողները հասկանում են, որ իրենց համաձայնությունը ըստ ցանկության է և կարելի է չեղյալ համարել, այնուամենայնիվ, համաձայնությունը չեղյալ համարելով (ետ վերցնելով), համաձայնագրով արդեն տեղի ունեցած աշխատանքը չի ժխտվում։

Գնահատում՝ Ըստ ուսումնական կանոնադրության 56320-56339 բաժինների և 20 U.S.C. 1414 բաժնի (a), (b) և (c) կետերի, զանազան քննություններ և չափանիշերի օգնությամբ որոշվում է ձեր երեխայի անկարողությունը և նրա ուսումնական կարիքները բավարարելու համար անհրաժեշտ ծառայությունների բնույթը և չափը։ Շրջանային կրթական հիմնարկության մասնագետները քննությունը կատարում են առանձնապես ձեր երեխայի համար ընտրված գնահատման միջոցներով։ Քննության և գնահատման նյութերը և ընթացակարգերը զերծ են լինելու ազգային և մշակութային խտրականություններից։ Քննությունը կատարվում է ձեր երեխայի մայրենի լեզվով կամ հաղորդակցության այլ ձևերով, բացառությամբ եթե դա հնարավոր չլինի։ Միայն առանձին մի քննության արդյունքով չի կարելի երեխայի համար համապատասխան ուսումնական ծրագիր որոշել։

Համապատասխան հանրային անվճար կրթություն («FAPE»)՝ Կրթություն, որը (1) հանրային ծախսերով, հսկողությամբ և ուղղությամբ է տրամադրվում, և անվճար է ձեզ համար, (2) բավարարում է Կալիֆորնիա նահանգի լուսավորության նախարարության չափանիշները, և (3) տրամադրվում է ձեր երեխայի ուսումնական կարիքները բավարարելու համար մշակված կրթական անհատականացված ուսուցման ծրագրի համապատասխան, որը իրագործվում է նախադպրոցական, տարրական կամ միջնակարգ դպրոցի ծրագրերում։

Ուսուցման անհատականացված ծրագիր («IEP»)՝ Ձեր երեխայի IEP խմբի կողմից մշակված գրավոր մի փաստաթուղթ, որն առնվազն պարունակում է հետևյալները՝ (1) ներկայիս ուսումնական ձեռքբերումների և գործողության մակարդակը, (2) տարեկան նպատակները, (3) հասակակիցների ուսումնասիրության արդյունքների հիմունքով, երեխայի համար տրամադրելի սահմանաներում, հատուկ կրթության և առնչվող ծառայությունների և լրացուցիչ օգնությունների և ծառայությունների հաղորդագրությունը, (4) դժվարություն չունեցող աշակերտների հետ ընդհանուր կրթության ծրագրին չմասնակցելու քանակի բացատրությունը, (5) IEP-ում ներառված ծրագրերը և ծառայությունները սկսելու նախատեսված թվականը, տևողությունը, հաճախականությունը և վայրը, և (6) համապատասխան նպատակակետերի չափանիշերը, գնահատման ընթացակարգերը և տարեկան ժողովի թվականը՝ նպատակներն իրականացնելու ուղղությամբ աշակերտի ձեռքբերումները որոշելու համար։

Նվազագույն սահմանափակիչ միջավայր («LRE»)՝ Անկարողունակ երեխաներն իրենց կարիքներին համապատասխան, կսովորեն դժվարություն չունեցող երեխաների հետ, հատուկ դասարաններում, տարբեր դպրոցում. կամ դժվարություն ունեցող երեխաներին ընդհանուր կրթության ծրագրից կհանեն միայն այն ժամանակ, երբ անկարողության բնույթը և ծանրությունն այն աստիճանի է, որ ընդհանուր կրթության դասարանում, հավելյալ օգնության և ծառայությունների միջոցով բավարար առաջադիմություն չի կարողանա արձանագրել։

Կրթական շրջանային գործակալություն («LEA»)՝ Այս տերմինը ներառում է դպրոցի կրթաշրջանը, Բաունթիի լուսավորության գրասենյակը (COE), հատուկ կրթության շրջանային ծրագիրը (SELPA) կամ SELPA-ին անդամ «charter» դպրոցը։

Չափահասների տեղեկացման իրավունքները՝ Ձեր երեխան, տասնութ տարեկան հասակում, իր ուսումնական ծրագրերի մասին բոլոր տեղեկությունները ստանալու և որոշում կայացնելու իրավունք ունի, բացառությամբ, եթե նահանգային օրենքներով և գործընթացների հիման վրա անիրավունակ է համարվում։ Կալիֆորնիայի օրենքի համաձայն անխնամակալ չափահասները պետք է իրավունակ լինեն։

Ծնող՝ Ծնողը սահմանվում է որպես՝ (1) երեխայի օրինավոր խնամակալություն ստանձնած անձ (2) մի չափահաս աշակերտ, որի համար խնամակալ կամ պահապան չի նշանակված, (3) հարազատ կամ խորթ ծնողի դեր կատարող մի անձ, ներառյալ տատիկ-պապիկ, խորթ ծնող կամ այլ ազգական, որի հետ ապրում է երեխան, (4) փոխարինող (surrogate) ծնող և (5) դայակ (հոգեծնող), եթե հարազատ ծնողի երեխայի ուսման վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը դատարանի հրամանով սահմանափակված է։

Ե՞րբ և ինչպե՞ս կարելի է ձեռք բերել կրթական տվյալները։

Կալիֆորնիայի կրթական կանոնադրության «Ընտանեկան կրթության իրավունքի և գաղտնապահության ակտի» («FERPA») համաձայն, Կալիֆորնիայի հանրային դպրոցներում արձանագրված բոլոր երեխաների ծնողները կամ խնամակալները տվյալները ստուգելու իրավունք ունեն։

Կրթական տվյալներն ուղղակի ձեր երեխային վերաբերող տեղեկություններ են, որոնք պահվում են դպրոցում, կրթաշրջանում, այն գործակալություններում կամ կազմակերպություններում, որոնք հավաքում, պահպանում կամ օգտագործում են անձնապես ճանաչելի տեղեկությունները կամ որոնցից տեղեկություններ են ձեռք բերում։ Թե դաշնակցային և թե նահանգային օրենքներում կրթական տվյալները մեկնաբանվում են, որպես աշակերտի ճանաչմանը վերաբերող որևէ տեղեկություն, բացի ուղեցույցում ներառված տեղեկություններից, որը պահպանում է դպրոցի LEA-ը կամ իր պարտականությունը կատարող աշխատակցից է պահանջվում պահպանել ձեռագիր, տպագիր, ձայնագրված, նկարահանված, միկրոնկարահանված, համակարգչի կամ այլ միջոցներով արձանագրված տեղեկությունները։ Կրթական տվյալների մեջ չեն ներառվում դպրոցի աշխատակցի կամ փոխարինող ուսուցչի օգտագործման համար կատարված ոչ պաշտոնական գրառումները։ Եթե տվյալները մեկից ավելի աշակերտների մասին են տեղեկություններ պարունակում, դուք միայն ձեր երեխայի վերաբերյալ տեղեկությունները կարող եք ստանալ։

Անձնական տեղեկությունները կարող են ներառել՝ (1) երեխայի, ծնողի կամ ընտանիքի մի այլ անդամի անունը, (2) երեխայի հասցեն, (3) երեխայի ինքնությունը բացահայտող մի տեղեկություն, ինչպես օրինակ սոցիալ ապահովության համարը, աշակերտի ինքնության համարը, կամ դասական գործերի համարը, (4) մի շարք առանձնահատկություններ կամ այլ տեղեկությունների ցանկը, որի միջոցով հաստատ հնարավոր կլինի բացահայտել երեխայի ինքնությունը։

Բացի դրանից, անկարողունակ երեխաների ծնողները, ներառյալ կրթական որոշում կայացնելու իրավունքով ոչ-խնամարկու ծնողներն իրավունք ունեն՝ (1) վերանայել երեխայի ինքնության, գնահատման, ուսման տեղավորման և FAPE-ի վերաբերյալ բոլոր տեղեկությունները, և (2) ստանալ տվյալների բացատրություն ու մեկնաբանություն։ Այս իրավունքները փոխանցվում են 18 տարեկան կամ բարձրագույն ուսումնական հաստատություն հաճախող աշակերտներին։

Ցուրաքանչյուր դպրոցում, տեղեկությունները պահվում են տնօրենի մոտ, իսկ կրթաշրջանի համար տեղեկությունները պահվում են FOOTHILL SELPA-ում, որը նշված է այս փաստաթղթի վերջում։ Ուսումնական տվյալները կարող են պահվել դպրոցում կամ կրթաշրջանում, բայց տեղեկությունների համար ներկայացրած գրավոր խնդրագիրը կհամարվի բոլոր վայրերից տեղեկությունները ստանալու խնդրագիր։ Տեղեկությունների պահպանման համար պատասխանատու անձը (պահանջի դեպքում) ձեզ կտրամադրի աշակերտի տեղեկությունների տեսակների և վայրերի ցուցակը։ Հատուկ կրթության ծրագրից դուրս գրվելուց երեք տարի հետո, վերացվում են բոլոր փաստաթղթերը։

Տեղեկությունների պահպանման համար պատասխանատու անձն աշակերտի ուսումնական տվյալները վերանայելու իրավունքը վերապահում է ձեզ, առնվազն տասնվեց տարեկան ձեր երեխային, ձեր կողմից լիազորված անհատներին, դպրոցի պաշտոնյաներին, որոնք օրինապես հետաքրքրված են երեխայի կրթությամբ, ձեր երեխայի նշած ուսումնական հաստատություններին, դաշնակցային կամ նահանգային կրթական գործակալության աշխատակիցներին։ Մյուս բոլոր

դեպքերում, տեղեկությունները կմերժվեն, բացառությամբ տեղեկությունները հաղորդելու ձեր գրավոր համաձայնագրով կամ դատարանի հրամանագրով: LEA-ը պետք է տեղեկամատյանում ցուցակագրի այն անհատների անունները, որոնք ստացել են տեղեկությունները, տեղեկությունները ստանալու ժամանակը և պատճառը:

IDEA-ի պահանջները բավարարելու նպատակով, մասնակից ընկերություններին անձնական տեղեկությունները հայտնելու համար ծնողի համաձայնությունը չի պահպանվում, բացառությամբ հետևյալ հանգամանքներում՝ (1) ծառայություն ապահովող կամ ծառայության համար վճարող մասնակից ընկերությունների պաշտոնյաներին անձնական տեղեկությունները հաղորդելուց առաջ, և (2) եթե երեխան հաճախում է կամ հաճախելու է ծնողների բնակության վայրի կրթաշրջանից դուրս մի մասնավոր դպրոց, ապա նախքան մասնավոր դպրոցի տարածքի և ծնողների բնակավայրի կրթաշրջանների միջև տեղեկությունների փոխանակումն անհրաժեշտ է ծնողի համաձայնությունը:

Ուսումնական տվյալների քննարկումը կամ մեկ օրինակը ձեզ կտրամադրվի դիմումնագիրը ստանալուց հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում: LEA-ի կանոնադրության համաձայն կորոշվի պատճենի, բայց ոչ տեղեկությունները պատրաստելու գինը, որը պետք է վճարել, բացառությամբ եթե վճարելը ձեզ կզրկի ձեր երեխայի ուսումնական տվյալները ձեռք բերելու հնարավորությունից: Ուսումնական նույն տվյալների հավելյալ պատճենների համար պետք է վճարել:

Երբ ձեզ տեղեկացնեն, որ տվյալներն այլևս LEA-ին պետք չեն, դուք կարող եք պահանջել, որ տեղեկությունները վերացվեն, որը կարելի է ամբողջովին վերացնել կամ ինքնությունը բացահայտող տեղեկությունները հանել: Այնուամենայնիվ, LEA-ը պարտավոր է ընդմիշտ պահել յուրաքանչյուր աշակերտի տվյալները, որը ներառում է՝ (1) երեխայի անունը, հասցեն և հեռախոսահամարը, և (2) երեխայի գնահատականները, հաճախումները, դասերը, ավարտած դասարանը և ավարտական տարեշրջանը:

Եթե կարծում եք, LEA-ի հավաքած, պահպանած կամ օգտագործած ուսումնական տվյալները ճիշտ չեն, մոլորեցնող են կամ խախտում են գաղտնապահության կամ երեխայի այլ իրավունքները, գրավոր կերպով պետք է պահանջել LEA-ից, որ ուղղի տեղեկությունները: Եթե LEA-ը ձեր պահանջն ընդունի, տեղեկությունների ուղղում կկատարվի և ձեզ կհայտնի այդ մասին:

Եթե LEA-ը, մինչև 30 օր, հրաժարվի պահպանջված ուղղումները կատարել, ապա LEA-ը ձեզ կհայտնի տեղեկությունների ճշգրիտ լինելը, մոլորեցնող լինելը և գաղտնապահության և իրավունքների խախտումը որոշելու համար դատավարական ունկնդրության դիմելու ձեր իրավունքի մասին: Եթե դատավարական ունկնդրություն պահանջեք, LEA-ը որոշակի ժամանակահատվածում, ունկնդրում կնշանակի, որը պետք է բավարարի հետևյալ պահանջները՝ (1) LEA-ը պետք է նախապես ձեզ հայտնի ունկնդրության թվականը, ժամը և վայրը, (2) ունկնդրությունը կարող է վարել ունկնդրման արդյունքով ուղղակի չշահագրգռված որևէ անհատ, ներառյալ LEA-ի որևէ պաշտոնյա, (3) LEA-ը պետք է խնդրին առնչվող փաստերը ներկայացնելու լրիվ հնարավորություն տա ձեզ, (4) LEA-ը պետք է ունկնդրությունից հետո իր որոշումը գրավոր ձեզ հայտնի, որոշակի ժամանակաընթացքում, և (5) որոշումը պետք է հիմնված լինի միայն ներկայացված փաստերի վրա և պետք է ներառի փաստերի ամփոփումը և որոշման պատճառը: Դուք կարող եք, ձեր ծախսերով, ներկայացուցչի կամ փաստաբանի հետ ներկայանալ:

Եթե դեկավար մարմինը, ունկնդրությունից հետո որոշի, որ տեղեկությունները փոփոխության չեն ենթարկվելու, դուք իրավունք ունեք գրավոր կերպով ներկայացնել փաստերի ձեր վարկածը, որը ընդմիշտ կկցվի վիճելի տեղեկությանը: Այս հայտարարությունը կկցվի, եթե վիճելի տեղեկությունը բացահայտվի:

Ի՞նչ է նշանակում ինքնության ուսումնական գնահատում և ինչպե՞ս կարող եմ ձեռք բերել այն:

Ինքնության ուսումնական գնահատումը («IEE») մի քննություն է, որը կատարում է մի մասնագետ, որը ձեր երեխային կրթություն ապահովող LEA-ի աշխատակից չէ, բայց համապատասխանում է Կալիֆորնիայի լուսավորության նախարարության («CDE») և LEA-ի պահանջներին: Եթե LEA-ի

կատարած վերջին քննության արդյունքների հետ համաձայն չեք և ձեր անհամաձայնությունը հայտնել եք LEA-ին, ապա դուք իրավունք ունեք և հավանաբար կարող եք հանրային ծախսով ինքնուրույն ուսումնական գնահատում (IEE) ձեռք բերել ձեր երեխայի համար։ Հանրային ծախսով նշանակում է, կամ հանրային ընկերությունները կվճարեն գնահատման համար կամ այնպես կանեն, որ այս գնահատումն անվճար լինի ձեզ համար։ LEA-ը կարող է այսպիսի IEE ձեռք բերելու և պայմանականությունը որոշելու համար LEA-ի չափանիշերի վերաբերյալ տեղեկություններ տրամադրել ձեզ։

Եթե դուք հանրային ծախսով IEE եք պահանջում, LEA-ը պետք է կամ (1) դատական գործ հարուցի ընդդեմ ձեզ, իր գնահատման համապատասխան լինելն ապացուցելու, կամ (2) վստահանա, որ IEE-ը հանրային ծախսով տրամադրվի ձեզ։ Եթե դատավարական ունկնդրության ժամանակ, LEA-ը ապացուցի իր գնահատման համապատասխան լինելը, դուք դեռևս IEE-ի իրավունք կունենաք, բայց ոչ հանրային ծախսով։

Եթե մասնավոր կատարված գնահատման արդյունքները LEA-ին հանձնեք, IEP խումբը, ձեր երեխայի FAPE-ը վերանայելու համար այդ արդյունքները նկատի կառնի։ Մասնավոր գնահատումները կարելի է ներկայացնել ձեր երեխային վերաբերող դատավարական ունկնդրության ժամանակ։

Եթե LEA-ը իր ստուգման ժամանակ դիտարկել է ձեր երեխային, կամ գնահատման գործընթացը իրավունք է տալիս դասարանում դիտարկումներ կատարել, ապա IEE կատարող անհատին ևս պետք է թույլ տալ, որ դասարանում կամ IEP խմբի կողմից առաջարկված ուսումնական մի միջավայրում դիտարկումներ կատարի։

Եթե մտադիր եք հանրային ծախսով, ձեր երեխային մասնավոր դպրոց ուղարկել, LEA-ն առաջարկված վայրը և առաջարկված վայրում աշակերտին դիտարկելու հնարավորություն կունենա, եթե ծնողը կամ խնամակալն արդեն աշակերտին միակողմանի կերպով տեղավորվել է մասնավոր դպրոցում։

Ի՞նչ է նախօրոք գրավոր տեղեկացում և ե՞րբ եք ստանալու։

LEA-ը պարտավոր է գրավոր կերպով ձեզ տեղեկացնել, երբ նա առաջարկում կամ մերժում է փոփոխություններ կատարել ձեր երեխայի նանաչման, գնահատման կամ ուսումնական տեղավորման վերաբերյալ։ Այս առաջարկման կամ մերժման գրավոր տեղեկացումը պետք է որոշակի ժամանակահատվածում կատարվի։ Եթե այս տեղեկացումը նախապես չի հանձնվել ծնողներին, ապա LEA-ը ծնողի դատավարական ունկնդրության պահանջագիրը ստանալով այն կտրամադրի ծնողին։ Գրավոր տեղեկացումը պետք է պարունակի՝

- LEA-ի առաջարկած կամ մերժած գործողությունների բացատրությունը, գործակալության առաջարկած կամ մերժած գործողությունների պատճառը, քննարկված այլ գործողությունների նկարագրությունը և այդ գործողությունների մերժման պատճառը։
- Առաջարկության կամ մերժման համար հիմք հանդիսացող յուրաքանչյուր գնահատման գործընթացի, քննության, արձանագրության կամ զեկույցի նկարագրությունը։
- IEP խմբի քննարկված այլ հնարավորությունների բացատրությունը և այդ հնարավորությունների մերժման պատճառը։
- LEA-ի առաջարկմանը կամ մերժմանն առնչվող այլ գործոնների բացատրությունը։
- Տեղեկացում, որ ծնողները կարող են իրենց իրավունքների և գործընթացի տեղեկագիրը կամ այդ իրավունքները հասկանալու ուղղությամբ օգնություն ստանալ իրենց կրթաշրջանի հատուկ կրթության տնօրենից, SELPA-ի տնօրենից կամ Սակրամենտոյի լուսավորության նախարարությունից (CDE)։

Ի՞նչ է նշանակում ծնողական համաձայնություն և ե՞րբ է պահանջվում։

Ըստ նախորդ բացատրությունների, նախքան աշակերտին գնահատելը կամ հատուկ կրթության և հարակից ծառայություններ տրամադրելը, LEA-ը պետք է ծնողի համաձայնությունը ստանա։ LEA-ը երեխայի նախնական գնահատման և վերագնահատման համար պետք է աշխատի ծնողի լավատեղյակ համաձայնությունը ստանալ։ Եթե չհամաձայնեք նախնական գնահատման կամ վերագնահատման հետ, LEA-ը կարող է, բայց պարտադիր չէ, դատական գործընթացի միջոցով

ձեռք բերել ձեր համաձայնությունը։ Եթե չհամաձայնվեք *նախնական* IEP-ի տեղավորման և ծառայությունների հետ, LEA-ը ձեր համաձայնությունը ստանալու համար չի կարող դատական գործընթացի դիմել։ Այնուամենայնիվ, երբ նախնական IEP-ի տեղավորման և ծառայությունների համար LEA-ը ձեր համաձայնությունն է պահանջում և դուք այդ համաձայնությունը չեք տալիս, ապա LEA-ը ձեր երեխային FAPE չտրամադրելու համար պատասխանատու չի համարվելու։ Պահանջված համաձայնությունը չստանալով, LEA-ից IEP խմբի ժողով գումարել և IEP ծրագիր մշակել չի պահանջվելու։

Եթե հրաժարվում եք ձեր երեխայի IEP-ում նշված բոլոր ծառայություններից, որոնց հետ նախկինում համաձանել էիք, LEA-ը պետք է դատական գործ հարուցի։ Դուք կարող եք գրավոր կերպով համաձայնել ձեր երեխայի IEP-ի որոշ մասերի հետ, և այդ մասերը պետք է իրագործվեն LEA-ի միջոցով։

Վերջապես, ձեր երեխային վերագնահատելու համար ձեր լավատեղյակ համաձայնությունն անհրաժեշտ չի լինի, եթե LEA-ը դատավարական ունկնդրության ժամանակ կարողանա ցույց տալ, որ ձեր համաձայնությունը ստանալու համար բավականաչափ միջոցներ է ձեռնարկել բայց պատասխան չի ստացել։

Իրավո՞ւնք ունեք միտքս փոխել և համաձայնությունս չեղյալ համարել։

Եթե, հատուկ կրթության և առնչվող ծառայությունների համար առաջին կայացված որոշումից հետո, ծնողը իր համաձայնությունը գրավոր չեղյալ համարի հապուկ կրթության և առնչվող ծրագրերի մատակարարման համար, կրթաշրջանը կամ չարթեր դպրոցը՝

- Չի կարող շարունակել երեխային հատուկ կրթություն և առնչվող ծառայություններ տրամադրել, բայց նախքան ծառայությունների դադարեցումը պետք է գրավոր տեղեկացվի։
- Չի կարող օգտագործել միջամտական գործընթացը, դատական ունկնդրման պրոցեսը՝ համաձայնություն ձեռք բերելու կամ վճռելու, որ ծառայությունները կարող են տրամադրվել երեխային։
- Չի կարող FAPE տրամադրելու կանոնները խախտող համարվել, երեխային հատուկ կրթության և առնչվող ծառայություններ չտրամադրելու համար։
- Չի պահանջվում IEP հանձնախմբի ժողով գումարել և հատուկ կրթության և առնչվող ապագա ծառայությունների ծրագիր կազմել երեխայի համար։

Եթե ծնողն երեխայի հատուկ կրթության ծառայությունների համար իր նախնական համաձայնությունը չեղյալ է համարում, դպրոցի կրթաշրջանից կամ չարթեր դպրոցից չի պահանջվում հատուկ կրթության ծառայություն ստանալու հանձնարարությունները հանելով վերափոխել աշակերտի ուսումնական ռեկորդը, քանի որ ծնողը չեղյալ է համարել իր համաձայնությունը։ Այս պայմանը կիրառվում է այն ժամանակ, երբ ծնողը հրաժարվում է հատուկ կրթության բոլոր ծառայություններից։ Եթե ծնողը համաձայն է հատուկ կրթության որոշ, բայց ոչ բոլոր ծառայությունների հետ, այդ դեպքում խնդիրը պետք է լուծվի դատական ունկնդրման գործընթացով։

Ինչպե՞ս կարող եմ ներկայացնել իմ երեխայի ուսումնական տվյալների վերաբերյալ գանգատը։

Դուք ձեր երեխայի կրթությանը վերաբերող որևէ գանգատ ներկայացնելու և լուծելու իրավունք ունեք։ Եթե ձեր երեխայի կրթական ծրագրի վերաբերյալ որևէ մտահոգություն ունեք, FOOTHILL SELPA-ն խորհուրդ է տալիս այդ մտահոգությունը հայտնել ուսուցչին, դպրոցի տնօրենին և ձեր երեխայի IEP-ի խմբին։

Եթե LEA-ը ոչ-պաշտոնական ձևով չկարողանա լուծել այդ խնդիրը, դուք կարող եք բողոք ներկայացնել LEA-ին կամ Կալիֆորնիայի լուսավորության նախարարությանը (CDE)։

Եթե հարցը անկարողունակ երեխայի հայտնաբերման, գնահատման և կրթական տեղավորման նախաձեռնության կամ փոփոխության համար առաջարկությանը կամ մերժմանը, անվճար հանրային համապատասխան կրթության (FAPE) ապահովմանը, կամ ձեր երեխայի համար համապատասխան ծրագրի հնարավորության քննարկմանն է վերաբերում, դուք կարող եք

դատավարական ունկնդրության համար հայց ներկայացնել (ստորև նկարագրված)։ LEA-ը ևս իրավունք ունի դատավարական ունկնդրության համար հայց ներկայացնել երեխայի հայտնաբերման, գնահատման և կրթական տեղավորման նախաձեռնության կամ փոփոխության համար առաջարկությանը կամ մերժմանը, անվճար հանրային համապատասխան կրթության (FAPE) ապահովմանը, կամ ձեր երեխայի համար համապատասխան ծրագրի հնարավորության քննարկմանը վերաբերող որևէ հարցի համար։

Ի՞նչ է օրենքի խախտման գանգատը և որո՞նք են իմ իրավունքները։

IDEA-ի կամ Կալիֆորնիայի հատուկ կրթության օրենքի համաձայն, օրենքի խախտման գանգատը պետք է՝ (1) լինի գրավոր, (2) պարունակի մի հաղորդագրություն, որտեղ նշված կլինի IDEA-ի կամ Կալիֆորնիայի կրթության օրենքի այն կետերը, որոնք խախտել է LEA-ը, (3) պարունակի հայտարարությունը հաստատող փաստեր, (4) պարունակի բողոքարկուի ստորագրությունը և նրա հետ կապվելու համար տեղեկություններ և (5) եթե գանգատը վերաբերում է մի երեխայի, այն պետք է պարունակի՝ (ա) երեխայի անունը և հասցեն (կամ անտուն երեխայի հետ կապվելու տեղեկություններ), (բ) երեխայի դպրոցի անունը, (գ) խնդրի նկարագրությունը և խնդրին վերաբերող փաստերը), և (դ) ձեզ հայտնի առաջարկված լուծումները։

Կրթաշրջանի և LEA-ի մակարդակով գանգատներ՝ FOOTHILL SELPA-ը խորհուրդ է տալիս ձեզ հատուկ կրթության խնդիրներին վերաբերող գանգատները ուղղակի LEA-ին ներկայացնել, որպեսզի LEA-ը ոչ պաշտոնական և արդյունավետ կերպով կարողանա արագորեն անդրադառնալ խնդրին։ LEA-ը ներկայացրած բողոքները գաղտնի պահելու իր գործընթացն է մշակել և ձեզ հետ կհանդիպի ժամանակին հետազոտություն կատարելու և կաշխատի լուծել խնդիրը։ Գործերի վարիչը կօգնի ձեզ լուծելու կրթաշրջանի և աշխատողների կամ կապալառուների և աշակերտների դեմ խտրականության գանգատները։ Գանգատարկման գործերի վարիչը կարող է գանգատը գրելու համար օգնել ձեզ ու նաև ապահովել օրենքով պահանջվող տեղեկությունները։ Ըստ պատշաճի, գանգատարկման գործերի վարիչը ձեզ կուղարկի գանգատը հետազոտելու և լուծելու համար պատասխանատու այլ գործակալությունների մոտ։

Նահանգային մակարդակով գանգատներ՝ Ցուրաքանչյուր անհատ կամ կազմակերպություն կարող է LEA-ի, CDE-ի կամ որևէ գործակալության դեմ գանգատ ներկայացնել IDEA-ի կամ նահանգային օրենքի խախտման համար։ Գործերի վարիչը կարող է ձեզ օգնել ձեր գանգատը գրելու և ապահովել օրենքով պահանջվող տեղեկությունները։ Պատշաճության պարագայում, գործերի վարիչը ձեզ կուղարկի գանգատը հետազոտելու և լուծելու համար պատասխանատու այլ գործակալությունների մոտ։ Գանգատը պետք է ներկայացնել CDE-ին հետևյալ հասցեով՝ **California Department of Education, Special Education Division, Procedural Safeguards Referral Services, 1430 N Street, Suite 2401, Sacramento, CA 95814։ Հեռախոս (800) 926-0648, ֆաքս՝ (916) 327-3704։**

Գանգատը պետք է CDE-ին ներկայացնել գանգատի համար հիմք հանդիսացող փաստերը իմանալուց կամ պատճառ ունենալուց **մեկ** տարվա ընթացքում։

Ձեր գանգատը ներկայացնելուց հետո վաթսուն (60) օրվա ընթացքում CDE-ը՝ (1) անհրաժեշտության դեպքում, տեղում ինքնուրույն հետազոտություն կկատարի, (2) ներկայացրած գանգատի վերաբերյալ, հավելյալ տեղեկություններ, գրավոր կամ բանավոր, ներկայացնելու հնարավորություն կտա ձեզ, (3) գանգատին պատասխանելու հնարավորություն կտա LEA-ին, ներառյալ խնդիրը լուծելու առաջարկ, (4) գանգատը միջամտությամբ լուծելու հնարավորություն կտա ձեզ և LEA-ին, (5) կվերանայի առնչվող բոլոր տեղեկությունները և կորոշի թե արդյոք LEA-ը խախտում է IDEA-ի կամ առնչվող նահանգային օրենքները, և (6) գանգատի լուծման գրավոր որոշումը կուղարկի ձեզ և LEA-ին, որը կպարունակի ներկայացված փաստերն ու ամփոփումը և վերջնական որոշման պատճառները։

Ի՞նչ է միջամտությունը և ե՞րբ կարող եմ դա պահանջել։

Խորհուրդ է տրվում, որ նախքան դատավարական ունկնդրության դիմելը, կողմերը աշխատեն հատուկ կրթության վիճելի խնդիրը լուծել ավելի քիչ հակառակորդային բնույթ կրող միջոցներով, ինչպիսին է միջամտությունը և որոշումը քննարկելու տարբերակը («ADR»)։ Թեև ձեզ խորհուրդ է

տրվում փորձել միջամտությամբ լուծել խնդիրը, բայց դա չի կարող ձեր դատավարական ունկնդրության իրավունքի հետաձգման պատճառ հանդիսանալ։

Երեխայի հայտնաբերման, գնահատման և կրթական տեղավորման և անվճար հանրային համապատասխան կրթության (FAPE) ապահովմանը վերաբերող խնդիրների լուծման համար, այս կամավոր նախաունկնդրության միջամտության ժողովները պետք է ոչ-թշնամական մթնոլորտում վարել, որ երկու կողմերն էլ գոհ լինեն։ Ուստի փաստաբանները կամ այլ անկախ կապալառուները, որոնք փաստաբանական օրինական ծառայություններ են մատուցում, չեն կարող մասնակցել նախաունկնդրության միջամտական ժողովին։ Սա մասնակից կողմերից ոչ մեկին չի արգելում միջամտական ժողովից առաջ կամ հետո խորհրդակցել փաստաբանի հետ, ոչ էլ փաստաբան ծնողին զրկում է ժողովին մասնակցելու իրավունքից։ Կողմերը կարող են ներկայանալ և խորհրդակցել իրենց ոչ-փաստաբան ներկայացուցչի հետ։

Միջամտական այս ժողովը կնշանակվի, CDE-ը միջամտության ձեր խնդրագիրը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում և կավարտվի 30 օրվա ընթացքում, բացառությամբ, եթե երկու կողմերն էլ ցանկանան երկարաձգել ժամկետը։ Միջամտությունը կվարի մասնագետ և չեզոք մի միջնորդ, որը վերապատրաստված է միջնորդության արդյունավետ տեխնիկաներով։

Եթե դուք և LEA-ը միջամտության միջոցով լուծեք խնդիրը, ապա երկու կողմերը խնդրի լուծման օրինական համաձայնագիր պետք է կազմեն, որը (1) հաստատում է, որ միջամտության ժամանակ տեղի ունեցած բանավիճումները գաղտնի կպահվեն և հետագա որևէ դատավարական ունկնդրության կամ քաղաքացիական դատավարության ժամանակ որպես ապացույց չեն օգտագործվի, և (2) կրում է թե ձեր և թե LEA-ի ներկայացուցչի ստորագրությունը։

Միջամտության գրված և ստորագրված համաձայնագիրը կարելի է կիրառել որևէ նահանգի լիիրավ արդարադատության (դատարան, որը նահանգային օրենքով կարող է ունկնդրել այսպիսի գործերը) կամ Միացյալ Նահանգների շրջանային դատարաններում։ Միջամտության ժամանակ կատարված բանավիճումները պետք է գաղտնի մնան։ Դրանք չպետք է ապագայում օգտագործվեն դաշնակցային կամ նահանգային որևէ դատավարական ունկնդրության կամ քաղաքացիական դատավարության ժամանակ։

Ի՞նչ է դատավարական ունկնդրությունը և որո՞նք են իմ իրավունքները։

Դատավարական ունկնդրությունը պաշտոնական մի դատավարություն է, որը նախագահում է վարչական օրենքի դատավորը։ Դատավարությունը կարող է լինել ձեր կամ LEA-ի նախաձեռնությամբ, երբ անկարողունակ երեխայի հայտնաբերման, գնահատման և կրթական տեղավորման նախաձեռնության կամ փոփոխության համար առաջարկության կամ մերժման, անվճար հանրային համապատասխան կրթության (FAPE) ապահովման կամ ձեր երեխային համապատասխան ծրագիր տրամադրելու վերաբերյալ տարաձայնություն լինի։

Պահանջագիրը պետք է ուղարկվի՝ **Office of Administrative Hearings ("OAH"), հետևյալ հասցեով՝ Office of Administrative Hearings, Attn: Special Education Division, 2349 Gateway Oaks Drive, Suite 200, Sacramento, CA 95833-4231, հեռախոս (916) 263-0880, Ֆաքս (916)263-0890։**

Դատավարական ունկնդրության համար պահանջագիրը պետք է ներկայացնել գանգատի համար հիմք հանդիսացող փաստերն իմանալուց կամ պատճառ ունենալուց *երկու* տարվա ընթացքում։ Այս ժամանակի սահմանափակումը ձեզ չի վերաբերում, եթե ձեր դատավարական ունկնդրության դիմելը խոչընդոտվել է, որովհետև LEA-ը (1) ձեր պահանջագրի համար հիմք հանդիսացող խնդրի լուծումը սխալ է մեկնաբանել, (2) այս տեղեկագրի տեղեկությունները թաքցրել է։

Ձեր դատավարական ունկնդրության բողոքագրում **պետք է** ներառվի հետևյալ տեղեկությունները՝ (1) ձեր երեխայի անունը, (2) ձեր երեխայի հասցեն (եթե երեխան անտուն է, ապա կապի տեղեկություն), (3) երեխայի դպրոցի անունը, (4) ծրագրի նախաձեռնման կամ փոփոխման համար կատարված առաջարկության վերաբերյալ առաջացած խնդրի նկարագրությունը, և (5) խնդրի համար առաջարկված լուծումն ըստ ձեր գիտության։ Դուք դատավարական ունկնդրության պահանջագրի մի օրինակը պետք է հանձնեք LEA-ին։ Ձեզ կամ LEA-ի համար դատավարական ունկնդրություն չի նշանակվի, եթե դատավարական պահանջագրում նշված չլինեն վերոհիշյալ բոլոր տեղեկությունները։

OAH-ը հինգ օրվա ընթացքում պետք է որոշի, թե դատավարական ունկնդրության բողոքագիրը բավարարում է վերոհիշյալ պահանջները և ձեզ գրավոր հայտնի բողոքագրի ամբողջական լինելու մասին։ Եթե OAH-ը որոշի որ տեղեկություններն անբավարար են, բողոքարկուն հնարավորություն կունենա մի նոր գանգատ ներկայացնել, որը կբավարարի վերոհիշյալ բոլոր պահանջները։

Եթե դուք դատավարական ունկնդրության եք դիմում, ձեր պահանջագիրը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում, LEA-ը պետք է ձեզ, երեխայի IEP խմբի, որը դատավարության ունկնդրության պահանջագրում նշված փաստերի մասին որոշակի տեղեկություններ ունի, և որոշում կայացնելու իրավունք ունեցող LEA-ի ներկայացուցչի հետ ժողով գումարի և քննարկի առաջացած խնդրի լուծումը։ LEA-ի փաստաբանը չի մասնակցելու ժողովին, բացառությամբ եթե դուք փաստաբանով ներկայանաք։

Բացառությամբ լուծման գործընթացը կամ միջամտությունը չեղյալ համարելու ձեր և LEA-ի գրավոր համաձայնության, խնդրի լուծման ժողովին չմասնակցելը, կհետաձգի խնդրի լուծման գործընթացն ու դատավարական ունկնդրությունն այնքան ժամանակ, մինչև կհամաձայնեք մասնակցել ժողովին։

Եթե խնդրի լուծման ժամանակ համաձայնության հասնեք, համաձայնությունը պետք է գրի առնվի և վավերացվի ձեր և LEA-ի ներկայացուցչի ստորագրությամբ։ Ստորագրությունից հետո, դուք և LEA-ը երեք աշխատանքային օր ժամանակ ունեք համաձայնագիրը չեղյալ համարելու։ Եթե դատավարական ունկնդրության գանգատը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում (լուծման պրոցեսի համար հատկացված ժամանակի ընթացքում), LEA-ը խնդրի համար ձեզ բավարարող լուծում չգտնի, դատավարական ունկնդրություն կարող է տեղի ունենալ և վերջնական լուծում գտնելու համար կիրառվող ժամանակը կսկսվի։

Դատավարական ունկնդրությունից առաջ որևէ ժամանակ, դուք և LEA-ը կարող եք միջամտությանը մասնակցելու վերաբերյալ համաձայնության գալ։ OAH-ը երկու կողմերի համար անվճար և անկողմնակալ մի միջնորդ կնշանակի։ Միջամտությունը որոշում կայացնելու համար երկարաձգում է OAH-ի ժամանակը, այնուամենայնիվ, միջամտությունը ձեր դատավարական ունկնդրության իրավունքը կամ այլ իրավունքները մերժելու կամ հետաձգելու միտումով չի կատարվում։

Եթե լուծման նիստերի և միջամտության ժամանակ դատավարական ունկնդրություն պահանջելու համար հիմք հանդիսացող խնդիրները չլուծվեն, OAH-ը պետք է դատավարական ունկնդրություն գումարի, խնդրի համար վերջնական որոշում կայացնի և որոշման օրինակն ուղարկի երկու կողմերին, լուծման ժամանակահատվածի ավարտից մինչև 45 օրվա ընթացքում։ Դատավարական ունկնդրության ժամանակը և վայրը պետք է հարմար լինի երկու կողմերի համար։

Դատավարական ունկնդրության կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի՝ (1) արդարացի և անկողմնակալ վարչական ունկնդրության, որը տեղի կունենա հատուկ կրթության կառավարման և վարչական ունկնդրությունների օրենքներին գիտակ անձի գլխավորությամբ, (2) ներկայացվելու անկարողունակ երեխաների և պատանիների խնդիրների մասնագետ փաստաբանի կամ պաշտպանի միջոցով, (3) վկայություններ, գրավոր և բանավոր փաստարկներ ներկայացնելու, (4) դիմադրելու, խաչաձև հարցաքննելու, և վկաների ներկայություն պահանջելու (5) ըստ ցանկության, ունկնդրության գրավոր կամ էլեկտրոնային բառացի արձանագրությունը ստանալու, (6)ըստ ցանկության, ունկնդրության փաստերի և որոշումների վերաբերյալ տեղեկությունները ստանալ գրավոր կամ էլեկտրոնային, լուծման ժամանակահատվածի ավարտից մինչև 45 օրվա ընթացքում, (7) ունկնդրությունից առնվազն 10 օր առաջ, մյուս կողմից, փաստաբանի հետ ներկայանալու մտադրության վերաբերյալ նամակ ստանալու, (8) ունկնդրությունից առնվազն 10 օր առաջ, մյուս կողմից, իրենց խնդիրների և առաջարկված լուծումների մասին տեղեկացվելու, (9) ունկնդրությունից առնվազն 5 աշխատանքային օր առաջ, մյուս կողմից, բոլոր փաստաթղթերի, ներառյալ մինչև այդ թվականը կատարված գնահատումների ու հանձնարարությունների, վկաների ցանկի և նրանց վկայության ընդհանուր ոլորտի վերաբերյալ փաստաթղթերի պատճենը ստանալու, (10) երեխային ունկնդրությանը բերելու, (11) ունկնդրությունը բաց կամ փակ անց կացնելու, (12) թարգմանիչ պահանջելու, (13) ունկնդրման ժամանակը հիմնավոր պատճառով երկարաձգելու և (14) անկարողունակ երեխաներին օրինական ծառայություններ կամ պաշտպանություն ապահովող անհատների ցանկը ձեր երեխայի կրթաշրջանից, FOOTHILL SELPA-ից կամ OAH-ից պահանջելու։

Ի՞նչ կլինի եթե ես չհամաձայնվեմ դատավարական ունկնդրության արդյունքների հետ։

Դատավարական ունկնդրության որոշումը վերջնական է և պարտադրվում է երկու կողմերին։ Կողմերից յուրաքանչյուրը կարող է դատական գործ հարուցել որոշման դեմ համապատասխան դատարանում։ Քաղաքացիական դատարանում, փաստերը և արձանագրությունները կհանձնվեն դատարանին։ Դատարանը, կողմերից յուրաքանչյուրի խնդրանքով կարող է լրացուցիչ փաստերը լսել, և իր որոշումը կայացնել միայն փաստերի գերակշռության հիման վրա։ Այս բողոքը պետք է ներկայացնել վարչական դատավորի որոշման թվականից մինչև 90 օր։

Որտե՞ղ կտեղավորվի իմ երեխան դատավարական ունկնդրության ժամանակաընթացքում։

Երբ LEA-ը դատավարական ունկնդրության պահանջագիրը ստանա, խնդրի լուծման ժամանակաընթացքում, և անկողմնակալ ունկնդրության կամ դատարանի որոշմանը սպասելու ընթացքում, երեխան պետք է մնա ուսումնական նույն ծրագրում, բացառությամբ եթե ծնողը և LEA-ը այլ որոշում են կայացրել։

Եթե ձեր դատավարական ունկնդրության պահանջագրում ներառված է առաջին անգամ համրային դպրոց ընդունվելու դիմումնագիրը, ձեր համաձայնությամբ, ձեր երեխան կտեղավորվի համրային դպրոցի ընդհանուր ծրագրում մինչև դատավարական ունկնդրության ավարտը։

Եթե ձեր դատավարական ունկնդրության պահանջագրում ներառված է առաջին անգամ ծառայություններից օգտվելու դիմումնագիրը, մի երեխայի համար, որն ընտանեկան անհատական ծառայությունների ծրագրում (IFSP) է և երեք տարեկան է դարձել, LEA-ից չի պահանջվում IFSP ծառայություն տրամադրել։ Եթե ձեր երեխան պայմանունակ լինի LEA-ի հատուկ կրթության ծառայությունների համար և դուք առաջին անգամ համաձայնեք, որ ձեր երեխան հատուկ կրթության ծառայություն ստանա, այնուհետև, դատավարական ունկնդրության արդյունքից ելնելով, LEA-ը պետք է տրամադրի հատուկ կրթության և հարակից ծառայություններ, որոնք ինքնարկման ենթակա չեն (որոնք, որ դուք և LEA-ը համաձայնել եք)։

Եթե ձեր երեխան տեղավորվել է ուսումնական ժամանակավոր ծրագրում (IAES), նա, դատավարական ունկնդրությունից կախված, առավելագույնս 45 օր կամ մինչև IAES-ի ապառման թվականը կմնա IAES ծրագրում, որն ավելի շուտ լինի։

Ի՞նչ պայմաններում փաստաբանին վճարած ծախսը կվերադարձվի ինձ։

Դատարանը, իր հայեցողությամբ, կարող է հրամայել, որ LEA-ը փաստաբանի վճարը ծնողին վերադարձնի, եթե ծնողը դատավարական ունկնդրության հաղթող կողմը լինի։ Բացի այդ, LEA-ը կարող է շահել փաստաբանի վճարն ընդդեմ ծնողի փաստաբանի կամ ծնողի, որը դատական գործ է հարուցել կամ ձեռնարկել է թեթևամիտ, անտրամաբանական և անհիմն գործողություն, կամ շարունակում է դատական գործողությունը, երբ դատավարությամբ պարզվել է, որ այդ հայցը թեթևամիտ, անտրամաբանական և անհիմն է։ LEA-ը ևս կարող է շահել փաստաբանի վճարը ընդդեմ ծնողի փաստաբանի կամ ծնողի, եթե ծնողի գանգատը կամ հետագա դատական գործողությունը անպատշաճ նպատակներով, ինչպես օրինակ՝ ոտնձգություն կատարելու, անհիմն ուշացում պատճառելու, դատական գործերի ծախսերն անտեղի մեծացնելու նպատակներով է կատարվել։

Դատարանը կարող է փաստաբանի վճարը նվազեցնել, եթե՝ (1) ծնողն անհիմն կերպով ուշացրել է դատավարությունը (բացառությամբ, եթե LEA-ը ևս ուշացրել է դատավարությունը կամ խախտել է դատական գործողության գործընթացը), (2) փաստաբանի ժամական վճարը գերազանցում է համայնքային վճարին, (3) տրամադրված ժամանակը և իրավական ծառայությունները չափազանց շատ լինեն, (4) կամ ծնողի փաստաբանը LEA-ին չի ներկայացրել դատական գործողության համապատասխան գանգատը։

Փաստաթղթի լրացուցիչ ծախսը չի փոխհատուցվի, եթե ծնողը 10 օրվա ընթացքում չմերժի կամ չպատասխանի կարգավորման վերաբերյալ LEA-ի կատարած առաջարկությանը, դատական ունկնդրությունից կամ դատական գործողությունից 10 օր առաջ, եթե ունկնդրության նախագահը կամ դատարանը գտնի, որ ծնողի ձեռք բերած լուծումը ավելի լավը չէ քան կարգավորման որոշումը: Չնայած այս սահմանափակումներին, փաստաթղթի վճարը կարող է փոխհատուցվել ծնողին, եթե դատարանը որոշի, կարգավորման առաջարկության մերժումը հիմնականում արդարացված է:

Փաստաթղթը IEP ժողովին մասնակցելու համար կարող է չվճարվել, բացառությամբ եթե ժողովը գումարվել է որպես վարչական դատավորության, կամ իրավաբանական գործողության արդյունքի: Լուծման ժողովը վարչական դատավորության, կամ իրավաբանական գործողության հիման վրա գումարված ժողով չի համարվում, և փաստաթղթի վճարի վերանայման նպատակով գումարված ժողովը ևս վարչական ունկնդրություն կամ դատավարական գործողություն չի համարվում:

Որո՞նք են իմ երեխայի իրավունքները, երբ LEA-ը կարգապահական միջոցներ է մշակում նրա համար:

Նախքան անկարողունակ երեխային 10 օրով, կամ տաս ամբողջական օրերի համար դպրոցից ժամանակավոր հեռացնելը, երբ այդպիսի հեռացումները տեղավորման փոփոխություն են նշանակում, LEA-ը IEP ժողով պետք է գումարի որոշելու, թե արդյոք պատժի ենթակա վարքը ձեր երեխայի անկարողունակության դրսևորումն է: IEP-ը կորոշի, թե արդյոք տվյալ վարքը՝ (1) ձեր երեխայի անկարողության պատճառով է և ուղիղ հարաբերական է ձեր երեխայի անկարողության հետ, կամ (2) ուղղակի երեխայի IEP-ը չիրագործելու հետևանքով է: Որոշակի պարագաներում, ձեր երեխան կարող է իր ներկայի տեղավորումից հեռացվել և ոչ ավելի քան 45 օր ժամկետով IAES տեղավորվել: Հատուկ կրթության օրենքների համաձայն դպրոցի պաշտոնյաներն իրավունք ունեն ձեր երեխայի կատարած հանցագործությունը հայտնելու համապատասխան մարմիններին:

Ծնողներն իրավունք ունեն հատուկ կրթության աշակերտի ժամանակավոր գրկվելու և հեռացվելու որոշման դեմ բողոքել: Երբ ծնողը կամ LEA-ը երեխայի կարգապահական տեղավորման կամ մանիֆեստացիայի որոշման ժողովի արդյունքի դեմ բողոք ներկայացնի, նահանգն արագ կերպով դատավարական ունկնդրություն պետք է նշանակի, որը պետք է տեղի ունենա բողոքը ներկայացնելուց մինչև 20 դպրոցական օրվա ընթացքում և արդյունքը որոշվի ունկնդրությունից հետո 10 դպրոցական օրվա ընթացքում: Բողոքի ժամանակաընթացքում ձեր երեխան պետք է նույն տեղավորման մեջ մնա, այնուամենայնիվ, եթե ձեր երեխան 45 օրով IAES ծրագրում է տեղավորվել, նա, մինչև դատական ունկնդրություն որոշում կայացնելը կամ մինչև սպառման թվականը կմնա IAES ծրագրում, որն ավելի շուտ լինի:

Եթե պահանջվում է գնահատել երեխային, երբ երեխայի կարգապահությանը վերաբերող դատավարական գործողությունը դեռ անավարտ վիճակում է, գնահատումը պետք է արագ կերպով կատարվի: Այսպիսի անավարտ գնահատումների դեպքում, աշակերտը պետք է լինի դպրոցի տնօրինության կողմից որոշված ուսումնական ծրագրում:

Այն աշակերտը, որը նախկինում չի որոշվել, որ պայմանունակ է հատուկ կրթության և հարակից ծրագրերի համար, կարող է պաշտպանվել համաձայն IDEA-ի կանոնների, եթե LEA-ը, նախքան պատժի ենթակա անկարգապահության տեղի ունենալը, տեղյակ էր, որ այդ երեխան անկարողունակ է: Տեղյակ լինել է համարվում, եթե՝ (1) ծնողը գրավոր կերպով հայտնել է կրթաշրջանի տնօրինությանը կամ ղեկավարությանը, կամ երեխայի ուսուցչին, որ երեխան հատուկ կրթության և հարակից ծրագրերի կարիք ունի, (2) ծնողը երեխայի գնահատում է պահանջել, (3) դպրոցի անձնակազմը LEA-ին հայտնել է երեխայի ցուցաբերած վարքի նկատմամբ իր մտահոգությունը: LEA-ը, տեղյակ չի համարվում, եթե ծնողը թույլ չի տվել երեխային գնահատել կամ հրաժարվել է հատուկ կրթության ծառայություններից, կամ երեխան գնահատվել է, և որոշվել է որ հատուկ կրթության ծառայությունների կարիք չունի: Եթե LEA-ը, տեղյակ չէ երեխայի անկարողունակության մասին, երեխան չի կարողանա IDEA-ի պաշտպանական դատավարությունից օգտվել:

Երեխային ժամանակավոր այլ ուսումնական ծրագրում տեղավորվելու համար ի՞նչ ընթացակարգ է օգտագործվում։

IAES–ը դպրոցի տնօրինության կողմից նշանակված ուսումնական ծրագիր կամ միջավայր կամ կախակայում է, որը չպետք է 10 դպրոցական օրից ավելին լինի (այս տևողությունը վերաբերում է նաև անկարողունակություն չունեցող աշակերտներին)։ IAES-ում տեղավորելու որոշումը կարող է IEP խումբը կատարել, երբ LEA-ը կարգապահական միջոց է ծրագրել։

Որոշակի պայմաններում, կարելի է մինչև 45 դպրոցական օր IAES նշանակել, եթե երեխան թույլ է տվել հետևյալ օրինազանցությունները դպրոցում, դպրոցի տարածքում, նահանգի կամ LEA-ի իրավասության ներքո կատարվող դպրոցական գործողությունների ընթացքում՝ (1) կրել է կամ ունեցել է որևէ զենք, (2) գիտակցաբար ունեցել կամ օգտագործել է նարկոտիկներ, (3) լրջորեն ֆիզիկական վնաս է պատճառել մեկ այլ անձի։ LEA-ը երեխային IAES-ում տեղավորելուց հետո, պետք է վարքի գնահատում կատարի, վարքի միջամտական ծրագիր մշակի և կիրառի, եթե դեռ չի արել։ Եթե արդեն վարքի միջամտական ծրագիր մշակվել է, IEP խումբը պետք է մտածի վերափոխումներ կատարելու մասին։ IEP խումբը IAES-ին պետք է հավաստիացնի, որ այդ ծրագիրը կօգնի երեխային իր կրթությունն ընդհանուր ուսումնական պայմաններում շարունակելու և ստանալու այն ծառայություններն ու բարեփոխումները, ներառյալ աշակերտի ներկայիս IEP-ի մեջ նկարագրված ծառայությունները, որպեսզի կարողանա իրագործել IEP-ի մեջ նշված նպատակները և ապահովել երեխայի օրինազանց վարքագծին վերաբերող բարեփոխումները։

Դաշնակցային օրենքով, դատավարական ունկնդրության ղեկավարը կարող է անկարողունակ երեխային վերատեղավորել այն ծրագրում, որտեղից երեխային հանել էին, կամ ոչ ավելի քան 45 օր համապատասխան IAES նշանակել, եթե դատավարական ունկնդրության ղեկավարը որոշի, որ երեխային ներկայիս ծրագրում պահելը, նկատելիորեն վտանգավոր է թե երեխայի և թե մյուսների համար։

Երբ երեխային IAES ծրագրում տեղավորելու որոշումը կայացվի, IAES-ի կարգապահական բաժնի կանոնների համաձայն, ծնողին պետք է հայտնել որոշման մասին և տեղեկություն ապահովել գործընթացի նախազգուշական բոլոր միջոցների մասին։ Եթե IAES-ը 10 դպրոցական օրից ավելին է, IEP խումբը պետք է համապատասխան պայմաններ և անհրաժեշտ ծառայություններ որոշի, որը ձեր երեխային իր ուսումը շարունակելու հնարավորություն կտա։

Որո՞նք են իմ երեխային միակողմանիորեն մասնավոր դպրոց դնելու իմ որոշմանը վերաբերող կանոնները։

Դատավարական ունկնդրության ղեկավարի կամ դատարանի հրամանով երեխային մասնավոր դպրոց դնելու վարձը կվճարվի ծնողին, եթե որոշվի, որ արձանագրությունից առաջ LEA-ը ժամանակին FAPE չի տրամադրել երեխային և որ մասնավոր դպրոցը հարմար վայր է երեխայի համար։ Հատուցումը կնվազի, եթե ծնողը, IEP-ի վերջին ժողովում, կամ երեխային դպրոցից հանելուց առնվազն 10 աշխատանքային օր առաջ LEA-ին չտեղեկացնի, որ հրաժարվում է առաջարկված տեղավորումից և իր երեխային հանրային ծախսերով մասնավոր դպրոց արձանագրելու իր մտադրության մասին։ Հատուցումը նույնպես կնվազի, եթե երեխային հանրային դպրոցից հանելուց առաջ, LEA-ը ծնողին տեղեկացրել է երեխային գնահատելու իր մտադրության մասին և ծնողը հրաժարվել է կամ երեխային գնահատման չի բերել։

Հատուցումը չի նվազեցվի եթե LEA-ը խոչընդոտել է ծնողին տեղեկությունը հայտնելու, ծնողը «գրավոր տեղեկացման» պահանջի մասին տեղեկություն չի ստացել կամ տեղեկացման պահանջի կատարելը կարող է ֆիզիկապես վնաս պատճառել երեխային։ Հատուցումը կարող է նվազել կամ չնվազել, եթե ծնողը գրագետ չէ և չի կարող անգլերեն գրել կամ տեղեկացման պահանջի կատարելը կարող է հոգեկան վնաս պատճառել երեխային։

Որո՞նք են նախանգային հատուկ դպրոցները։

Նախանգային հատուկ դպրոցները ծառայություններ են տրամադրում խուլ, թույլ լսողությամբ, կույր, թույլ տեսողությամբ կամ խուլ-կույր աշակերտներին երեք դպրոցներում՝ Կալիֆորնիայի խուլերի դպրոցներ Ֆրիմոնտում և Ֆրիվերսայդում, և Կալիֆորնիայի կույրերի դպրոց Ֆրիմոնտում։ Բնակելի և ցերեկային դպրոցի ծրագրեր են առաջարկվում մանուկ հասակից մինչև 21 տարեկան խուլ երեխաներին նախանգային երկու դպրոցներում, և 5-ից 21 տարեկան կույր երեխաներին Կալիֆորնիայի կույրերի դպրոցում։ Նախանգային հատուկ դպրոցներ նաև գնահատման ծառայություններ և տեխնիկական օգնություն են առաջարկում։ Նախանգային հատուկ դպրոցների մասին հավելյալ տեղեկություններ համար, խնդրվում է այցելել Լուսավորության վարչության կայքէջը http://www.cde.ca.gov/sp/ss/ հասցեով կամ դիմել ձեր երեխայի IEP հանձնախմբի անդամներին։

Ի՞նչ պայմաններում է փոխարինող ծնող նշանակվում երեխայի համար։

Եթե շրջանային կրթական գործակալությունը որոշի, որ երեխան փոխարինող ծնողի կարիք ունի, LEA-ը 30 օրվա ընթացքում փոխարինող ծնող կնշանակի, եթե երեխան՝

1. խնամատու է կամ դատարանի խնամակալության տակ է գտնվում, դատարանը որոշակիորեն սահմանափակել է երեխայի ուսման վերաբերյալ ծնողի որոշում կայացնելու իրավունքը *և* երեխան իրեն ներկայացնող պատասխանատու ծնող կամ խնամակալ չունի, կամ

2. երեխան դատարանի խնամակալության տակ չի գտնվում *և* ծնողը կամ խնամակալն անհետացել է, *կամ* երեխան խնամատար չունի *կամ* անտուն միայնակ երեխա է։

Երեխայի համար փոխարինող ծնող նշանակելու համար, LEA-ը նկատի կառնի ազգական խնամատար, որդեգրող ծնող կամ դատարանի կողմից նշանակված հատուկ պաշտպան, եթե լինեն այդպիսիները, այլապես LEA-ը իր ընտրությամբ մեկին կնշանակի։

Փոխարինող ծնողն երեխային նշգրտորեն ներկայացնելու գիտությամբ և հմտությամբ մի անձնավորություն կլինի։ Փոխարինող ծնողը պետք է առնվազն մեկ անգամ հանդիպի երեխայի հետ, բացառությամբ եթե այդպիսի անձնավորություն չկա, և պետք է նրբազգաց լինի երեխայի ծագման և մշակույթի նկատմամբ։ Փոխարինող ծնողն երեխայի ճանաչման, գնահատման, ուսման ծրագրավորման և զարգացման, տեղավորման, IEP-ի վերանայման ու վերափոխման և FAPE-ին վերաբերող բոլոր այլ խնդիրների վերաբերյալ, ներառյալ IEP-ին ոչ-հրատապ բժշկական, մտավոր առողջության, աշխատանքային և ֆիզիկական թերապիայի ծառայություններ մատուցելու համար գրավոր համաձայնագիր ապահովելու ներկայացուցիչը պետք է լինի։

Երեխային ներկայացնելու համար շահերի բախում ունեցող անձինք չեն կարող փոխարինող ծնողներ նշանակվել։ Շահերի բախում գոյություն ունի, երբ փոխարինող ծնողը երեխայի կրթությամբ կամ խնամատարությամբ զբաղվող անձը LEA-ի աշխատող է կամ խնամատար ծնողի հիմնական եկամուտը ստանում է այս երեխայի կամ այլ երեխաների խնամատարությունից։ Երբ այսպիսի բախումներ չլինեն ապա խնամատար ծնող կարող է լինել կենսաբոշակի անցած ուսուցիչը, հասարակական բարեկեցության աշխատակիցը և ատուգման ենթարկող ոստիկանները։ Անտուն միայնակ երեխայի դեպքում, հրատապ կամ անցումային ապաստարանների, ինքնուրույն ապրելու ծրագրերի և փողոցում ապրողներին օժանդակող ծրագրերի աշխատակիցները կարող են փոխարինող ծնողի դերում հանդես գալ, առանց վերոհիշյալ բախումները նկատի առնելով, մինչև հնարավոր կլինի վերոհիշյալ նախապայմաններով փոխարինող ծնող գտնել։

Փոխարինաբար, դատավորը կարող է, երեխային տրամադրվող խնամատարությունը հսկելով, փոխարինող ծնող նշանակել (հակառակ LEA-ի), որը կրավարարի վերոհիշյալ նախապայմանները։

Հատուկ կրթության բաժին

Ms. Tamara Schiern	1900 W. Olive Avenue Burbank, CA 91506	Հեռ. Ֆաքս	818-729-4449 818-729-4544
Ms. Beatriz Bautista	223 N. Jackson Street Glendale, CA 91206	Հեռ. Ֆաքս	818-241-3111 x1205 818-548-7237
Dr. Tamara Jackson	4490 Cornishon La Canada, CA 91011	Հեռ. Ֆաքս	818-952-8397 818-952-8394

Պաշտոնական տարածք

Mr. Matt Hill	1900 W. Olive Avenue Burbank, CA 91506	Հեռ. Ֆաքս	818-729-4400 818-729-4550
Mr. Winfred Roberson	223 N. Jackson Street Glendale, CA 91206	Հեռ. Ֆաքս	818-241-3111 818-548-9041
Ms. Wendy K. Sinnette	4490 Cornishon Avenue La Canada, CA 91011	Հեռ. Ֆաքս՝	818-952-8300 818-952-8309

Հաշվեկշռության վարիչներ

Dr. Brian O'Rourke	1900 W. Olive Avenue Burbank, CA 91506	Հեռ. Ֆաքս	818-729-4400 818-729-4576
Dr. Rene Valdes	223 N. Jackson Street Glendale, CA 91206	Հեռ. Ֆաքս	818-241-3111 818-547-0213
Ms. Wendy K. Sinnette	4490 Cornishon Avenue La Canada, CA 91011	Հեռ. Ֆաքս	818-952-8300 818-952-8309

Foothill SELPA

Dr. Tamara Jackson	Հեռ.	818-952-8397

Foothill SELPA-ն համն է առնում կրթական հավասար հնարավորություններ ստեղծել բոլոր անհատների համար: SELPA-ի ծրագրերը և աշխատանքները պետք է զերծ լինեն անկարողության, սեռային, սեռային ինքնության, սեռային արտահայտության, գենետիկական տեղեկությունների, ազգային, էթնիկական, կրոնական, սեռային կողմնորոշման կամ մեկ կամ ավելի այլապիսի հատկություններով անհատի կամ խմբի հետ կապ ունենալու վրա հիմնված խտրականություններից: